

առտուներուն մէջ : Յետոյ ամբօխը յարձակած է Հայ թաղին վրայ՝ սպաննելու համար բոլոր անոնք որ տուն ապաստանած կամ հոնկէ բնու դուրս չէին ելած : Այն ատեն է միայն որ Հայերը գտնուելով օրինաւոր ինքնապաշտպանութեան մը հարկին սակ, զինուած գիմազբուժիւն մը ցոյց տուած են, ուրիշց պատահած են երկուստեք կորուստներ : Սակայն, որովհետեւ ո՛չ մէկ Հայ երբէք չէ յարձակած իջամ թաղին վրայ, և որ բոլոր խլամ սպաննուածները գտնուած են Հայ թաղին կամ ասոր մօտակայ դիրքերու վրայ, բացարձակօրէն անկարելի է պնդել որ Հայերու ձեռք առած միջոցը պաշտպանողական և թուրքերունը յատկապէս պատրաստուած յարձակողական չբլլայ :

Խուլութիւնները այսպէս իրենց ընթացքը շարունակեցին մինչև 4 Ապրիլ :

Օսման էֆէնտի անունով խլամի մը ընտանիքը կը բնակէր Հայոց թաղին մէջ : Այս ընտանիքը ոչ միայն ոչ ոք չի խորհեցաւ նեղել, այլ ընդհակառակը, ամէն վտանգէ ապահով տեղ մը դրին զայն : Նմանապէս Հաճընի և Չորքմարդուանի (Տէօթ-Եօլ) մէջ գրունուող խլամ ընտանիքներ, հեռի ամենափոքր մտահոգութեան մը ենթարկուելէ Հայերու կողմէ ամէն կարգի հագածութեան սուարիօյ եղան :

Ահա սակի դարձեալ նիւթական և շոշափելի ապացոյց մը որ Հայերը՝ Իսլամներ կոտորելու վատ մտազբուժիւնը չեն ունեցած երբէք :

Կուսակալ ձէվատ պէյ, Ներքին Գործոց Նախարարութեան ուղղուած տեղեկագրով մը կը պնդէ որ իրեն անկարելի եղած էր կարգը պահպանել զինուորական միակ ջակատով մը ընդդէմ շարագործներու և մարդասպաններու՝ որոնք ոչ մէկ բանի կ'ուզէին ականջ դնել :

Սակայն Ապրիլ 4ին, Հայոց թաղը բնակող վերու-